Հաշվետու՝ 2022թ.-ին, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հավատարիմ մնալով սահմանված ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործման ավանդույթին, արձանագրեց մի շարք նվաճումներ և որոշ հիմնական ցուցանիշների աճ, շուկայում դիրքի ամրապնդում՝ շնորհիվ հաճախորդների վստահության, հավատարմության և Բանկի աշխատակիցների նվիրված ջանքերի, արդյունավետ ու ակտիվ թիմային աշխատանքի՝ ապահովելով բանկի շարունակական կայուն զարգացումը և գործունեության որակապես նոր՝ առավել արդիական փուլին անցումը:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը՝ ձևավորված շահույթը կազմել է 7,111.8 մլն դրամ՝ աճելով նախորդ տարվա համեմատ ավելի քան 2.4 անգամ:

2022թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 49.5 մլրդ դրամով կամ 13.7%-ով՝ կազմելով 409,3 մլրդ դրամ, ընդ որում՝ հաճախորդներին տրված վարկերը և փոխատվություններն աճել են 38.5 մլրդ դրամով կամ 17.4%-ով՝ կազմելով 259.4 մլրդ դրամ, ներդրումային արժեթղթերը՝ 4.6 մլրդ դրամով կամ 10.7%-ով՝ կազմելով 47.4 մլրդ դրամ:

Բանկի պարտավորությունները, որոնք ձևավորվել են ներքին և արտաքին շուկաներից ներգրավված ժամկետային միջոցների և ցպահանջ միջոցների հաշվին, հաշվետու տարում աճել են 13.8%-ով կազմելով՝ 360.2 մլրդ. դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 20.2 մլրդ դրամով կամ 14.9%-ով՝ կազմելով 156.2 մլրդ դրամ: Բանկի կապիտալն աճել է մոտ 13.6%-ով՝ կազմելով ավելի քան 49.1 մլրդ դրամ՝ հիմնականում արտաքին աղբյուրի՝ կանոնադրական կապիտալի համալրման, և ներքին աղբյուրի՝ ձևավորված շահույթի հաշվին:

Հաշվետու տարում բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում: Այսպես. 2022թ. բանկը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ կնքել է 45.0 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավված ռեսուրսներն ուղղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը և զարգացմանը:

Հաշվետու տարվա բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության մասին են վկայում նախորդ տարիներին գործարկված մասնաճյուղերի կայուն և դինամիկ զարգացումը:

Բանկի զարգացման արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են արդյունավետ կադրային քաղաքականությամբ, որը զուգակցում է կադրերի վերապատրաստումը գործուն խրախուսման համակարգի ներդրման հետ:

Բանկային համակարգում սուր մրցակցությունը նպաստում է համակարգի ընդհանուր առաջընթացին՝ պայմանավորված մրցակցությանը դիմանալու նպատակով բանկերի կողմից ձեռնարկվող միջոցառումներով: ՀՀ բանկային շուկայում դիրքերը պահպանելու և առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով՝ բանկը.

- մեծ ուշադրություն է դարձնում մատուցվող ծառայությունների ոչ միայն քանակական բազմազանմանը՝ նոր վարկային և ավանդային ծառայությունների

մշակման և ներդրման առումով, այլ նաև որակի բարձրացմանը, հաճախորդների սպասարկման ոլորտում նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառմանը,

- արձագանքելով ներքին շուկայում տեղի ունեցող զարգացումներին՝ բանկը վարում է ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականություն:

Ռիսկերի բացահայտման և կառավարման գործուն համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Բանկի ռիսկերի կառավարման գոյություն ունեցող համակարգը, որը ներառում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման» քաղաքականությունը՝ ըստ տարբեր ռիսկատեսակների կից կարգերով մշտապես զարգանում ու կատարելագործվում է, որը առաջիկայում նույնպես կզարգանա, կկատարելագործվի և կունենա նոր որակական մակարդակներ:

Խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Հայրապետյան

Խորհրդի անդամ Հ. Սուվարյան

28.04.2023թ